Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ բարձրագույն որակավորման կոմիտեի իրավագիտության 001 մասնագիտական խորհրդին
հասցե՝ ՀՀ 0025, Ալեք Մանուկյան փողոց 1

ԿԱՐԾԻՔ

Պաշտոնական ընդդիմախոսի՝
իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ
Արսեն Մարտիրոսյանի
ԺԲ.00.04 – Դատավարական իրավունք (դատարանակազմություն, քաղաքացիական դատավարություն, քրեական դատավարություն, կրիմինալիստիկա, դատական փորձաքննություն, փաստաբանություն, օպերատիվ-հետախուզական գործունեության տեսություն) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված Արտակ Արմենի Ղազարյանի՝ «Մասնավոր մեղադրանքի գործերով վարույթի առանձնահատկությունները քրեական դատավարությունում» թեմայով ատենախոսության և սեղմագրի վերաբերյալ

Ատենախոսության թեման նվիրված է քրեադատավարական ինստիտուտներից մեկի՝ մասնավոր մեղադրանքի գործերով վարույթի առանձնահատկություններին: Ընտրված թեմայի արդիականությունը կասկած չի հարուցում մի քանի տեսանկյունից. Նախևառաջ հարկ է նշել, որ թեև հիշյալ ինստիտուտի տևական գոյությանը, այդուհանդերձ հայրենական դատավարագիտության մեջ առկա չէ համալիր հետազոտություն՝ նվիրված այդ ինստիտուտին, այն դեպքում, երբ դրա գործնական կիրառության ընթացքում ի հայտ են եկել մի շարք խնդիրներ, որոնց մի մասը լուծել է ՀՀ վճռաբեկ դատարանը՝ համապատասխան նախադեպային որոշումներով, իսկ որոշները դեռևս շարունակում են մնալ չլուծված: Այս տեսանկյունից անհրաժեշտ է համալիր գիտական հետազոտության շրջանակներում վեր հանել առկա խնդիրները և ներկայացնել առաջարկներ, որոնք միտված կլինեն առկա խնդիրների հաղթահարմանը:

Բացի այդ, թեմայի հետազոտման անհրաժեշտությունը պայմանավորված է նաև ՀՀ ԱԺ կողմից 2021 թվականի հունիսի 30-ին (ուժի մեջ է մտնելու 2022 թվականի հուլիսի 1-ին) ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի ընդունման հանգամանքով: ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգիրքը ի տարբերության գործող օրենսգրքի՝ նախատեսել է մասնավոր մեղադրանքի գործերով վարույթի մի շարք առանձնահատկություններ, որոնք թեև գործնական կիրառություն չեն ստացել,

սակայն գիտական հանրության և պրակտիկ աշխատողների կողմից միանշանակ ընդունելության չեն արժանացել: Ուստի, գիտական հետազոտության շրջանակներում նոր քրեադատավարական օրենքում տեղ գտած դրույթները համակողմանի վերլուծելու, դրանց դրական կամ բացասական կողմերը ներկայացնելու անհրաժեշտություն կա:

Նշվածով պայմանավորված՝ ատենախոսը գիտական հետազոտության հիմնական նպատակ է սահմանել «մասնավոր մեղադրանքի գործերի» և մասնավոր մեղադրանքի ինստիտուտների էության բացահայտումը, դրանց վերաիմաստավորումը ու այդ լույսի ներքո ՀՀ քրեական դատավարության գործող և նոր օրենսգրքերի վերաբերելի դրույթների վերլուծությունը ու վեր հանված խնդիրների հաղթահարման առաջարկների ներկայացումը:

Նշված նպատակին հասնելու համար ատենախոսի կողմից խնդիր է դրվել՝

- բացահայտել մրցակցային (մեղադրական) դատավարությունում մեղադրանքի կազմակերպման հնարավորությունները՝ հստակորեն որոշելով մասնավոր մեղադրանքի տեղը դատավարության այդ մոդելում,
- տարանջատել մասնավոր անձի կողմից իրականացվող մեղադրանքի տեսակները՝ հստակ որոշելով տարանջատման հիմքը,
- տարանջատել մասնավոր մեղադրանքի տեսակները, բացահայտել դրանցից յուրաքանչյուրի բնորոշ գծերը,
- հստակորեն տարանջատել մասնավոր մեղադրանքի և «մասնավոր մեղադրանքի գործերի» ինստիտուտները միմյանցից՝ քննարկելով դրանց փոխպայմանավորվածության հարցը,
- բացահայտել մասնավոր մեղադրանքի և դիսպոզիտիվության, «մասնավոր մեղադրանքի գործերի» և տուժողի հետ հաշտվելու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտների հարաբերակցության հարցը,
- կատարված հետազոտության արդյունքների հիման վրա վերլուծել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի և ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի կարգավորումները, վեր հանել առկա թերությունները՝ առաջարկելով ընդհանուր և հայեցակարգային լուծումներ:

Առաջադրված վերը նշված խնդիրների գիտական լուծման միջոցով ատենախոսին, ըստ էության, հաջողվել է հասնել սահմանված նպատակին, ինչի մասին վկայում են պաշտպանության ներկայացվող դրույթները և արված եզրահանգումները:

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, չորս գլուխներից, դրանցում ընդգրկված տասներկու պարագրաֆներից, եզրակացությունից, օգտագործված գրականության և իրավական ակտերի ցանկից: Ընդ որում, գլուխները, պարագրաֆները և դրանցում շարադրված նյութը աչքի են ընկնում ներքին ամբողջությամբ, շարադրված է գրագետ հայերենով և գիտական լեզվով:

Աշխատանքը աչքի է ընկնում նաև հեղինակի՝ սեփական դատողությունների առատությամբ և ինքնուրույն ձևակերպումներով:

Աշխատանքի հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի կողմից հրապարակված թվով տասնմեկ գիտական հոդվածներում, ինչպես նաև սեղմագրում: Ատենախոսության և սեղմագրի ծավալն ու ձևավորումը համապատասխանում են ՀՀ բարձրագույն որակավորման կոմիտեի կողմից սահմանված կանոններին:

Միևնույն ժամանակ, ինչպես ցանկացած աշխատանք, այնպես էլ սույն աշխատանքը զուրկ չէ որոշակի թերություններից: Այսպես՝

1. Թեև ատենախոսությունն ունի «Մասնավոր մեղադրանքի գործերով վարույթի առանձնահատկությունները քրեական դատավարությունում» վերտառությունը, սակայն աշխատանքի ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրահանգելու, որ դրանում, ըստ էության, մանրամասն քննարկման առարկա չեն դարձվել մասնավոր մեղադրանքի գործերով քրեական գործի հարուցման և նախաքննության փուլերում առկա խնդիրները: Այս առումով ատենախոսը սահմանափակվել է միայն հիշատակելով, թե մասնավոր մեղադրանքի գործերի ինստիտուտը հիմնավորող մինչ այդ քննարկված տեսությունները ինչպիսի արտացոլում են գտել ՀՀ քրեական դատավարության գործող և նոր օրենսգրքերում: Մինչդեռ, ատենախոսության վերտառությունից բխում է, որ, ի թիվս այլնի, հետազոտության շրջանակներում պետք է մանրամասն քննարկման առարկա դարձվեր նաև հիշատակված հարցերը, առավել ևս, որ ատենախոսության շրջանակներում հեղինակի կողմից անդրադարձ են կատարվել այնպիսի հարցերի, որոնք, մեր կարծիքով, չեն բխում ատենախոսության նպատակից և խնդիրներից: Օրինակ՝ աշխատանքի 83-ից 98 էջերում ատենախոսը, շեղվելով հետազոտման նպատակից և խնդիրներից, պատմական վերլուծության հիման վրա քննարկման առարկա է դարձրել տուժողի դատավարական լիազորությունների՝ դրանց ընդլայնման կամ սահմանափակմանը վերաբերող հարցերը:

2. Աշխատանքի 150-152 էջերում ատենախոսը, անդրադառնալով «մասնավոր մեղադրանքի գործերի» և տուժողի հետ հաշտվելու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտների հարաբերակցությանը, իր անհամաձայնություն է հայտնում ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի մարտի 30-ի թիվ ԵԱՔԴ/0217/01/14 գործով որոշմամբ արտահայտված այն դիրքորոշմանը, որ դրանով մի կողմից թեև տարբերակվում են հիշյալ երկու ինստիտուտները և ընդգծվում է դրանց անկախությունը, մյուս կողմից, սակայն նկատվում է, որ տուժողի հետ հաշտվելու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտը կիրառվում է միայն հանրային մեղադրանքի գործերով և կիրառելի չեն մասնավոր հետապնդման այն գործերով, որոնք վերաբերում են ոչ մեծ ծանրության հանցագործություններին:

Նման եզրահանգում անելիս, կարծում ենք, որ ատենախոսի կողմից անտեսվել է այն հանգամանքը, որ ՀՀ վճռաբեկ դատարանը կայացված որոշմամբ համապատասխան վերլուծությունները կառուցել է՝ հիմք ընդունելով գործող օրենսդրության կարգավորումները, իսկ այս տեսանկյունից ատենախոսի դիտարկումները չեն կարող ընդունելի համարվել:

3. Ատենախոսության 153-րդ էջում հեղինակի կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 33-րդ և 183-րդ հոդվածների վերլության արդյունքում եզրահանգում է կատարվում առ այն, որ «ներկա օրենսգրքի պայմաններում *առանց բացառության բոլոր գործերով պարտադիր է մինչդատական վարույթը*[1] և քրեական գործի հարուցման, և նախնական քննության փուլերը»:

Հարկ է նշել, որ հեղինակի կողմից արված նման եզրահանգումը չի բխում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի կարգավորումներից: Այսպես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի համաձայն՝ նախնական քննությունը կարող է իրականացվել երկու՝ հետաքննության և նախաքննության ձևերով: Հետաքննությունը՝ որպես հանցագործության քննությանն ուղղված դատավարական գործունեություն, կարող է իրականացվել միայն հարուցված քրեական գործի պայմաններում: Ընդ որում, հետաքննությունը կարգավորող քրեադատավարական նորմերի վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ ***հետաքննությունը նախնական քննության ոչ պարտադիր (ֆակուլտատիվ) փուլ է***:

Այսպիսով, մասնավոր մեղադրանքի բոլոր գործերով չէ, որ պարտադիր պետք է իրականացվի նաև հետաքննություն:

4. Պաշտպանության ներկայացվող 7-րդ կետում ատենախոսը նշում է, որ «սուբսիդիար» մասնավոր մեղադրանքի ինստիտուտի բացակայությունը ստեղծում է մի վիճակ, որտեղ տուժողի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը ոչ մի կերպ չի ապահովվում: Այս իրավիճակի հնարավոր հաղթահարման եղանակ ատենախոսը դիտարկում է «սուբսիդիար» մասնավոր մեղադրանքի ներդրումը, որը հնարավորություն կտա մի կողմից պաշտպանել տուժողի իրավունքներն ու օրինական շահերը, մյուս կողմից՝ դատարանին զերծ պահել «դատախազին մեղադրանք պահելու» խնդրից՝ այդպիսով իսկ առավելագույնս ապահովելով դատարանի անկողմնակալությունը:

Դրա հետ մեկտեղ, ատենախոսը, անդրադառնալով մասնավոր մեղադրանքի գործերով վարույթի կարգը սահմանող ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի կարգավորումներին, եզրահանգում է, որ առկա կարգավորումները տուժողի իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության համար, ըստ էության, ստեղծում են «անհաղթահարելի դժվարություններ», ուստի կամ պետք է այդ գործերով վերացվի ՀՀ նոր քրեական դատավարության օրենսգրքով

---

[1] Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն: Հատուկ մաս – Եր.: ԵՊՀ հրատ, 2019 էջ 67:

առաջարկվող մեղադրանքի կազմակերպման մոդելը և մեղադրանքը կազմակերպվի ոչ թե հիմնական մասնավոր մեղադրանքի, այլ հիմնական պետական (հանրային) մեղադրանքի կարգով, կամ, եթե պահպանվում է մեղադրանքի կազմակերպման նշված մոդելը, ապա ***անհրաժեշտ է մասնավոր մեղադրանքի գործերը նեղացնել՝ այնտեղ ներառելով համեմատաբար «հեշտ ապացուցելի հանցագործություն-ներ»:***

Ի դեպ, նշված գաղափարը ատենախոսի կողմից ձևակերպվել է որպես պաշտպանության ներկայացվող դրույթ (պաշտպանության ներկայացվող 11-րդ կետ):

Այս տեսանկյունից ատենախոսի դիտարկումներն հակասական են: Մասնավորապես՝ մի դեպքում ատենախոսը, ելնելով տուժողի շահերից, առաջարկում է ՀՀ իրավական համակարգ ներմուծել սուբսիդիար մեղադրանքի ինստիտուտը, որի դեպքում մեղադրողի կողմից մեղադրանքից հրաժարվելու պայմաններում տուժողին պետք է իրավունք վերապահվի ինքնուրույն պաշտպանել մեղադրանքը, մեկ այլ դեպքում՝ քննադատաբար է մոտենում ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի կարգավորումներին, որտեղ նախատեսված են այնպիսի գործեր, որոնցով մեղադրանքի պաշտպանությունը տուժողի համար կարող են ստեղծել դժվարություններ:

5. Աշխատանքը էլ ավելի կշահեր, եթե ատենախոսը անդրադարձ կատարեր նաև գործնականում հաճախ հանդիպող այնպիսի իրավիճակների, երբ մասնավոր մեղադրանքի գործերով դիմողը (տուժողը) հայտնում է, որ բողոք չունի ենթադրյալ հանցանք կատարած անձից կամ կասկածյալից (մեղադրյալից), որպիսի պայմաններում որոշում է կայացվում քրեական գործ հարուցելը մերժելու կամ գործով վարույթը՝ համապատասխան հիմքերով կարճելու մասին, սակայն հետագայում այս կամ այն հանգամանքով պայմանավորված՝ փոխում է իր դիրքորոշումը և բողոքով խնդրում է դատախազին վերանայել կայացված որոշումը: Այս տեսանկյունից ցանկալի կլիներ, որպեսզի ատենախոսը նախ՝ վերլուծեր առկա օրենսդրական կարգավորումներ, ապա՝ ներկայացներ հստակ առաջարկներ, այդ թվում՝ օրենսդրական փոփոխությունների մակարդակում խնդրի հաղթահարման նպատակով:

6. Հարկ է նշել նաև, որ աշխատանքում տեղ են գտել նաև բազմաթիվ տեխնիկական վրիպակներ (օրինակ՝ 56-րդ, 57-րդ, 60-րդ, 61-րդ, 83-րդ և այլ էջերում):

Նշվածով հանդերձ՝ պետք է նշել, որ հիշյալ նկատառումները չեն արժեզրկում կատարված աշխատանքը և ընդհանուր առմամբ ատենախոսությունը պետք է հաջողված համարել:

Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ Արտակ Արմենի Ղազարյանի՝ «Մասնավոր մեղադրանքի գործերով վարույթի առանձնահատկու-

Ընդդիմախոսության ներկայացված ատենախոսությունը համապատասխանում է ԺԲ.00.04 «Դատավարական իրավունք» մասնագիտությանը (դատարանակազմություն, քաղաքացիական դատավարություն, քրեական դատավարություն, կրիմինալիստիկա, դատական փորձաքննություն, փաստաբանություն, օպերատիվ-հետախուզական գործունեության տեսություն), բավարարում է ՀՀ կառավարության 1997 թվականի օգոստոսի 8-ի թիվ 327 որոշմամբ հաստատված «Հայաստանի հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կարգի» 7-րդ կետի պահանջներին, իսկ հեղինակն արժանի է «Իրավաբանական գիտությունների թեկնածու» գիտական աստիճանի շնորհման:

Իրավաբանական գիտությունների
թեկնածու, դոցենտ՝

Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

03.12.2021թ.

«Ա.Մարտիրոսյանի ստորագրության իսկությունը հաստատում եմ»
ՀՀ գլխավոր դատախազության քարտուղար՝

Հ. ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ